

Մասնագիտական կարծիք

Հայաստանի Հանրապետությունում Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը ծրագրի ՇՄԱԳ-ում և դրա հավելվածներում ներկայացվող կենսաբազմազանության, նրա պահպանման և կենսաբազմազանության փոխհատուցման վերաբերյալ

Նախաբան

Հայաստանը, լինելով Կովկասի էկոտարածաշրջանի մաս, աշխարհի 35 կենսաբազմազանության առումով ամենահարուստ կետերից է՝ համաձայն Conservation International-ի կողմից մշակված չափանիշների: Հայաստանը նաև WWF-ի կողմից ընդունված աշխարհի 34 տարածաշրջաններից է, որը հարուստ է կենսաբազմազանությամբ:

Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) վավերացրել է կենսաբազմազանությանն առնչվող մի շարք միջազգային բնապահպանական համաձայնագրեր (կոնվենցիաներ և դրանց արձանագրություններ), որոնցով ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը նպաստում է շրջակա միջավայրի և կենսաբազմազանության արդյունավետ պահպանությանը:

<<Կենսաբազմազանության մասին>> կոնվենցիայի պահանջներին համապատասխան 2015 թ. մշակվել է <<Հայաստանի կենսաբազմազանության պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարությունը և պետական ծրագիրը>> 2016-2020 թվականների համար:

Կարևորելով Հայաստանի կենսաբազմազանության պահպանման խնդիրը և ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները, վերջին տարիներին մի շարք երկրներ, միջազգային կառույցներ ֆինանսավորում և իրականացնում են ծրագրեր՝ համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանմանը և նրա ողջամիտ օգտագործմանը: Վերջին տարիներին արձանագրվել են մեծ հաջողություններ կենսաբազմազանության պահպանման ոլորտում, հանձնա ստեղծվել են նոր բնության հատուկ պահպանվող տարածքներ /հիմնականում Սյունիկի և Վայոց Ձորի մարզերում/ և նախատեսվում է նորերի ստեղծումը, մասնավորապես Ջերմուկ ազգային պարկը՝ Վայոց Ձորի, և Տաթև ազգային պարկը՝ Սյունիկի մարզերում:

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրը գտնվում է ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս և հյուսիս-արևմտյան ճյուղավորումների ջրբաժանային մասում, 2500-2988 մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքավայրը գտնվում է կենսաբազմազանության կարևոր տարածքներից մեկում, որը ուրվագծվել է Հայաստանի Հանրապետության առաջատար բուսաբանների և կենդանաբանների կողմից /հավելված 1/:

Հիմք ընդունելով վերոնշյալը, ի հայտ է գալիս, որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի տարածքը կենսաբազմազանության առումով ունի մեծ նշանակություն և հանքի շահագործման դեպքում նախատեսված միջոցառումները պետք է մաքսիմալ նվազեցնեն բուսական և կենդանական տեսակների և նրանց ապրելավայրերի կորուստը:

Մեթոդաբանություն

Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի ծրագրի ազդեցությունը կենսաբազմազանության վրա պարզելու համար ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.
ՇՄԱԳ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Ամուլսարի բուսականության հետազոտություն (մայիս-հոկտեմբեր 2013)

ՀԱՎԵԼՎԱԾ 2. Ամուլսարի բուսականության հետազոտություն (հոկտեմբեր 2013-հունիս 2014)

ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ամուլսարի թռչնաբանական հետազոտություն (գարուն 2013)

ՀԱՎԵԼՎԱԾ 4. Ամուլսարի թռչնաբանական հետազոտություն (գարուն 2014)

ՀԱՎԵԼՎԱԾ 5. Մատնունի ծիրանավորը Ամուլսարում

ՀԱՎԵԼՎԱԾ 6. Մատնունի ծիրանավորի գիտահետազոտական ծրագրի տարեկան հաշվետվություն

ՀԱՎԵԼՎԱԾ 7. Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի տարրավացման հարթակի տարածքի ֆաունայի առանձին խմբերի արդի վիճակի հետազոտություններ

ՀԱՎԵԼՎԱԾ 8. Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի տարրավացման հարթակի տարածքի ֆաունայի առանձին խմբերի արդի վիճակի հետազոտությունների (ավարտական հաշվետվություն) հոկտեմբեր 2013- հունիս 2014

ՀԱՎԵԼՎԱԾ 11. Կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարություն

Բացի ՇՄԱԳ և իր հավելվածներից ուսումնասիրվել են ՀՀ բնապահպանության նախարարությունից տրամադրված որոշ փաստաթղթեր՝ կենսառեսուրսների կառավարման գործակալության կարծիքը ՇՄԱԳ-ի վերաբերյալ, «Գեոթիմ» ՓԲԸ և ՀՀ բնապահպանության նախարարության միջև կնքված պայմանագիրը ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսական տեսակի նոր պոպուլյացիայի առանձնյակների տեղափոխման վերաբերյալ, Biodiversity Action Plan for Amulsar, Armenia; “Natural and Critical Habitat Assessment for Amulsar, Armenia” (այսուհետ՝ NCHAA): Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերը, <<Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը >>, WWF-ի կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները:

Վերոնշյալ փաստաթղթերը ուսումնասիրելուց կարելի է եզրահանգել, որ Լիդիան Արմենիա ՓԲԸ կողմից բավականին մանրակրկիտ ուսումնասիրվել է տարածքի կենսաբազմազանությունը, առաջարկվել են միջոցառումներ տարածքում աճող Մատնունի ծիրանավոր և բնակվող Գորշ արջի պահպանման համար, ինչպես նաև տարածքի կենսաբազմազանության կորստի փոխհատուցման ծրագիր: Չնայած դրան մեր կողմից հայտնաբերվել են ու վեր են հանվել մի շարք խնդիրներ՝ կապված կենսաբազմազանության ուսումնասիրության, պահպանության և փոխհատուցման հետ, որոնք ներկայացնում եմ ստորև:

Կենսաբազմազանության ուսումնասիրություն

Ամուլսարի և հարակից տարածքների կենսաբազմազանության տվյալները հավաքվել և վերլուծվել են ՀՀ ԳԱԱ <Բուսաբանության ինստիտուտ> ՊՈԱԿ-ի, <Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն> ՊՈԱԿ-ի, Հայաստանի թռչունների պահպանման միության ՀԿ, <Թրեուիք բնապահպանական խորհրդատուներ> ընկերության (ՄԹ) և Քեմբրիջի համալսարանի (ՄԹ) գիտնականների կողմից: Հատուկ ուշադրություն է դարձվել տարածքներում (ՀՀ Կարմիր գրքում, 2010 թ.) գրանցված բույսերի և կենդանիների առկայությանը, և անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների մշակմանը:

Վերլուծելով բույսերի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները՝ կարելի է եզրահանգել, որ կատարվել է բավականին մեծ աշխատանք տեսակների հայտնաբերման, նրանց տարածվածության, նրանց ապրելավայրերի վերաբերյալ: Հիմնական գիտական ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ բույսերի Կարմիր գրքում Մատնունի ծիրանավոր տեսակի վերաբերյալ:

ՇՄԱԳ-ի 220 էջում նշվում է, որ 2012 թ.-ին Ամուլսարի գագաթային գոտու ժայռերում գրանցվել է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված Մատնունի ծիրանավոր (*Potentilla porphyrantha*) նոր ենթապոպուլյացիա ու չի ասվում, թե ում կողմից է այն հայտաբերվել: Իսկ իրականում այդ

ենթապոպուլյացիան առաջին անգամ հայտանբերվել է բույսերի կարգաբաններ, կենսաբանական գիտությունների թեկնածուներ Պավել Համբարյանի և Անուշ Ներսեսյանի կողմից՝ հայտնի բուսաբան, պրոֆեսոր Էլեոնորա Գաբրիելյանի ղեկավարությամբ, երբ 2012 թ.-ին WWF-ը կազմակերպեց արշավ դեպի Ամուլսար և հարակից տարածք՝ դաշտային ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով: Այդ արշավին նաև մասնակցում էին WWF-ի աշխատակիցներ՝ սողունների և կաթնասունների մասնագետ Ալեքսանդր Մալխասյանը և թռչնաբան Վասիլ Անանյանը, որոնք տարածքում իրականացված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերեցին ՀՀ կարմիր գրքում գրանցված սողունների երեք տեսակ, թռչունների 15 տեսակ և կաթնասունների երկու տեսակ: Պետք է նշեմ, որ մինչ այդ փաստը՝ ընկերությունը հերքում էր ՀՀ կարմիր գրքում գրանցված որևէ տեսակի առկայությունը Ամուլսարի տարածքում: Կարմիր գրքի տեսակների հայտնաբերվելուց հետո, WWF-ը կազմակերպեց մամուլի ասուլիս Էկոլուր ՆԿ ակումբում և հրատարակեց ստացված արդյունքները: Այդ ասուլիսի նկարահանումը առկա է հետևյալ կայքում՝ <http://ecolor.org/hy/news/mining/redlisted-species-in-amulsar-territory-revealed/4886/>

Նույն ՇՄԱԳ-ի 220 էջում նշվում է, որ «ՀՀ Բույսերի Կարմիր գրքի և ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի (ERE) տվյալներով՝ Գնդեվազ գյուղի շրջակայքում պետք է հանդիպելին *Acantholimon caryophyllaceum* և *Cicer anatolicum* բուսատեսակները, որոնց հավաքները իրականացվել են շատ վաղուց և, բնականաբար, հստակ կոորդինատները բացակայում են, սակայն հատուկ դաշտային դիտարկումներով այս տեսակները չեն գտնվել»:

Այս երկու բույսերի տեսակների մասին նշվում է նաև ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալության՝ Ամուլսարի ծրագրի ՇՄԱԳ-ի վերաբերյալ կարծիքում, որտեղ մասնավորապես ասվում է հետևյալը. «արժանահավատ չէ այն փաստը, որ ուսումնասիրությունների ժամանակ Գնդեվազ համայնքի տարածքում և նրա շրջակայքում չեն հայտնաբերվել ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ *Cicer anatolicum* Alef. և *Acantholimon caryophyllaceum* Boiss. տեսակները: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ՝ վերոնշյալ տեսակները հայտանբերելու ուղղությամբ»:

Այս ամենը նշվում է այն իսկ պատճառով, որ վերջերս ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի այցի ժամանակ բուսաբան Անուշ Ներսեսյանի կողմից հայտնաբերվեց ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված ամենայն հավանակությամբ Ոգնաթուփ մեխակի (VU) /*Acantholimon caryophyllaceum*/, իսկ կենդանաբաններ Վասիլ Անանյանի և Ալեքսանդր Մալխասյանի կողմից հայտնաբերվեց ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված Ապոլոն թիթեռը (*Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko*, VU):

Ինչպես և 2014 թ.-ին, այս անգամ էլ Լիդիանի որոշ աշխատակիցների կողմից սկսվեցին ժխտումներ այդ տեսակների առկայության վերաբերյալ և դրա հետ մեկտեղ, հնչեցին վիրավորանքներ այցը կատարած մասնագետների հասցեին (տես նյութերը այստեղ՝ <https://www.facebook.com/Yerkirmedia/videos/2206342042946963/>; https://www.facebook.com/lydianarmenia/posts/530995240678056?_tn_ =K-R):

Այս ամենը խոսում է այն մասին, որ ընկերությունը չի ընդունում այլ մասնագիտական կարծիք, որը պատիվ չի բերում միջազգային ստանդարտներով աշխատող կազմակերպությանը, որի ինստիտուցիոնալ բաժնետերերի շարքում են IFC-ն և ՎՋԵԲ-ը:

Ոգնաթուփի տեսակի վերջնական ճշգրտման համար անհրաժեշտ է լրացուցիչ այցելություն Ամուլսարի տարածք և եթե ընկերությունը չի արարկի, կարելի է կազմակերպել բուսաբանների և ընկերության մասնագետների հետ համատեղ արշավ, տեսակը վերջնական որոշելու նպատակով: ՇՄԱԳ-ի 220 էջում նշվում է նաև, որ «... դիտարկված տարածքներում ՀՀ Կարմիր գրքում (2010 թ.) գրանցված գլխարկավոր սնկերի տեսակները բացակայում են»:

Հիմք ընդունելով փաստաթղթերում սնկերի մասին կատարած ուսումնասիրությունների բացակայությունը՝ կարելի է եզրահանգել, որ այդ ուսումնասիրությունները չեն կատարվել, ինչը վկայում է ՇՄԱԳ-ի թերի կատարման մասին:

Կենդանական աշխարհը ուսումնասիրվել է հիմնականում 2013-2014 թթ.: Ուսումնասիրելով ՇՄԱԳ-ի փաստաթղթերը կարելի է եզրակացնել, որ ընդհանուր առմամբ կատարվել է բավականին մեծ աշխատանք ջրակենսաբանական և անողնաշար կենդանիների, ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների, կաթնասունների տեսակների ուսումնասիրության, նրանց տարածվածության և ապրելավայրերի վերաբերյալ:

Սակայն հարկ է նշել, որ կենսաբազմազանության ուսումնասիրություններում ուշադրության չեն արժանացել ՀՀ Կարմիր գրքում գրանցված մի շարք տեսակներ:

Երկկենցաղներից՝ սխտորագորտը (*Pelobates syriacus* VU), սողուններից՝ Անդրկովկասյան սահնոձը (*Zamenis hohenackeri*) և անողնաշար կենդանիներից ապոլոն թիթեռը (*Parnassius apollo kashtshenkoi*):

Անբավարար են ուսումնասիրվել Արփա գետի ձախ ափին գտնվող բեզոարյան այծի (*Capra aegagrus*, VU) ապրելավայրերը, և հանքի շահագործման հնարավոր ազդեցությունները այդ տեսակի ապրելավայրերի և թվաքանակի վրա: Ինչ վերաբերվում է Հայկական մուֆլոնին, ապա այդ տեսակը այնքան զգայուն է, որ բնական է նրա բացակայությունը այդ տարածքում մարդկանց և բազմաթիվ տեխնիկայի առկայության ժամանակ: Սակայն մեր կողմից իրականացված մուֆլոնի ապրելավայրերի մոդելավորումը ցույց է տալիս, որ Ամուլսարը և հարակից տարածքները կարող են լինել այդ տեսակի ապրելավայր ինչպես նաև միգրացիոն ուղի Ջանգեզուրի լեռնաշղթայից դեպի Ղարաբաղի լեռնաշղթա (հավելված 2), որը հաստատվում է մի շարք դաշտային ուսումնասիրություններով:

Կենսաբազմազանության պահպանություն

Կենսաբազմազանության պահպանման ծրագիրը ներկայացված է ՇՄԱԳ-ի հիմնական փաստաթղթում, Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանում (ԲՄԿՊ), ինչպես նաև Biodiversity Action Plan for Amulsar, “Natural and Critical Habitat Assessment for Amulsar փաստաթղթերում:

Բավականին մանրակրկիտ մշակվել են Մատնունի ծիրանավոր և Գորշ արջի պահպանման կառավարման պլանները, հատուկ ծրագիր է ներկայացվել Մատնունի ծիրանավորի տեղահանման, ex situ պահպանման և վերաբնակեցման վերաբերյալ, որը շատ ողջունելի է:

Մատնունի ծիրանավոր տեսակի կենսունակ պոպուլյացիայի, գորշ արջի կենսամիջավայրի, տարբերվ ենթալպյան մարգագետինների և լեռնային թռչունների բազմազան վայրերի պահպանության նպատակով նախատեսվում է ստեղծել անձեռնմխելի տարածք, որի հստակ սահմանները վերջնական տեսքի կբերվեն համայնքների և բնապահպանության նախարարության հետ լրացուցիչ խորհրդակցությունների արդյունքում: Այս մոտեցումը առաջին անգամ է կիրառվում Հայաստանում՝ հանքարդյունաբերող կազմակերպության կողմից, որը նույնպես ողջունելի է, և կարող է կիրառվել այլ հանքավայրերում նույնպես:

Չնայած մանրակրկիտ մշակված կենսաբազմազանության կառավարման պլանին, մի քանի դիտարկումներ են հայտնաբերվել կենսաբազմազանության պահպանման առումով:

ՇՄԱԳ-ի 247 էջում ներկայացված «Տարածքների շահագործման ժամանակ արդյունավետ բնապահպանական միջոցառումներից են սողունների հազվագյուտ տեսակների հավաքն ու վերաբնակեցումը անվտանգ տեղամասեր, ինչը իրականացվում է սողունների ակտիվության շրջանում (հիմնականում վաղ գարնանը)» և Ամուլսարի ոսկու հանքի Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՄԿՊ) կողմից BIO6-ում ներկայացված գործողությունը՝ «Փոքր կաթնասունների, սողունների և երկկենցաղների հեռացում աշխատանքային տարածքներից:

Աշխատանքային գոտիների սահմաններում թակարդն ընկած ցանկացած առանձնյակ կհեռացվի համապատասխան որակավորում ունեցող էկոլոգի կողմից», առաջացնում է մի շարք հարցեր.

- Արդյո՞ք այդ կենդանիների տեղահանման և վերաբնակեցման աշխատանքները կատարված են, քանի որ արդեն իրականացվել են բավականին լայնածավալ հողային և շինարարական աշխատանքներ, որի հետևանքով այդ կենդանիների միանշանակ կորուստ կարձանագրվեր;
- Եթե սողունների, այդ թվում վտանգված տեսակների տեղափոխությունը իրականացվել է, ապա կա՞ համապատասխան կառավարության որոշում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիների տեղափոխման և այլ վայրում վերաբնակեցման վերաբերյալ;
- Բոլոր զննված փաստաթղթերում չի հայտնաբերվել որևէ մշակված նախագիծ փոքր կաթնասունների, սողունների և երկկենցաղների տեղափոխման և վերաբնակեցման վերաբերյալ, առկա՞ է նման նախագիծ և եթե առկա է, ապա ինչու՞ չի ներկայացվել ՇՄԱԳ-ում և հավելվածներում;
- Եթե տեղափոխումը այսպես թե այնպես իրականացվել է, ապա որտե՞ղ են վերաբնակեցվել այդ կենդանիները, ո՞վ և ե՞րբ է իրականացրել տեղահանումը, և արդյո՞ք առկա են համապատասխան արձանագրություններ, նկարներ և այլ փաստաթղթեր:

Այս հարցերը առաջացել են այն իսկ պատճառով, որ հողային և շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում վերոնշյալ կենդանիների մեծ զանգվածի կորուստներ կլինեն, այդ թվում տարածքում հանդիպող ՀՀ կարմիր գրքում գրանցված օձերի /Շայկական իծ *Vipera (Montivipera) raddei*, VU), անդրկովկասյան սահնօձ (*Zamenis hohenackeri*, VU), հայկական լեռնատափաստանային իծ (*Vipera (Pelias) erivanensis*, VU), կովկասյան կատվօձ (*Telescopus fallax*, VU)/: Այս կենդանիները հնարավորություն չեն ունենալու տեղափոխվելու այլ ապրելավայրեր և տարածքում առկա դրանց պոպուլյացիաները ոչնչացվելու են ծանր տեխնիկայի, շինարարության և այլնի հետևանքով:

Կենսաբազմազանության փոխհատուցում

Կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարությունում առկա են որոշակի բացթողումներ և թերություններ:

Փաստաթղթում նշվում է. «Կենսաբազմազանության փոխհատուցման միջոցառումների նպատակն է՝ չունենալ հողի վրայի կենսաբազմազանության ոչ մի կորուստ և նախընտրելի է ապահովել հաշվեկշռի ավելացում՝ տեսակների կազմի, կենսամիջավայրերի կառուցվածքի, էկոհամակարգերի գործունեության և մարդկանց կողմից օգտագործման, կենսաբազմազանությանն առնչվող մշակութային արժեքների առումով»: Նշվում է նաև, որ «Ամուլսար լեռան վրա կան ընդարձակ, բազմազան ենթալայան և լեռնային մարգագետիններ, որոնք ԿՍԳ/ԿՊԳ-ում սահմանված չափանիշների համաձայն համարվում են բնական կենսամիջավայր»:

Ակնհայտ է, որ բաց հանքի շահագործման դեպքում հնարավոր չէ ապահովել “ոչ մի կորուստ”, քանի որ ծրագրի տարածքում բնական կենսամիջավայրի մեծ հատված վերացվելու է: Մինևույն ժամանակ ցանկացած փոխհատուցման միջոցառում, այդ թվում “Ջերմուկ” ազգային պարկի ստեղծումը, կամ որևէ այլ դեգրադացված տարածքների վերականգնումը երբևէ չեն ստեղծի այն բնական կենսամիջավայրերը՝ իրենց բնորոշ կենսաբազմազանությամբ և տեսակների միջև բարդ կապերով, որոնք ծրագրի իրականացման արդյունքում կկրեն մշտական և անշրջելի ազդեցություններ:

Փոխհատուցման ռազմավարությունում բացի “Ջերմուկ” ազգային պարկի ստեղծումից, նշվում են պահպանության լրացուցիչ գործողություններ միայն գորշ արջի և տափաստանային հողմավար բազեի համար, այն էլ մեծապես ուղղված դրանց մոնիթորինգին: Ազգային պարկի ստեղծումը և

նշված պահպանության լրացուցիչ գործողությունները ակնհայտորեն անբավարար են տարածքի կենսաբազմազանությանը հասցվելիք վնասի և կորուստի փոխհատուցման համար:

Ազգային պարկի ստեղծումը ինքնին ողջունելի նախաձեռնություն է, սակայն այն չի կարող փոխհատուցել Ամուլսարի ծրագրի տարածքի կենսաբազմազանության կորուստը:

Ազգային պարկի ստեղծման և գործունեության համար նախատեսվող գումարների բաշխվածությունը վերանայման կարիք ունի, բացակայում են ազգային պարկի պահպանման/բուֆերային գոտու համայնքային ծրագրերը: Ազգային պարկի ստեղծման համար նախատեսված գումարը ուռճացված է, իսկ պահպանման ծախսերը և կոնկրետ պահպանության/վերականգնման գործողությունների համար նախատեսվող գումարները շատ փոքր են: Դա հանգեցնելու է ազգային պարկի անարդյունավետ աշխատանքին և կենսաբազմազանության թերի պահպանությանը: Ընդհանուր առմամբ պահպանման ծախսերը պետք է վերահաշվարկվեն և նախատեսվեն առնվազն 10, իսկ ցանկալի է շատ ավելի երկար՝ մինչև 25 տարի ժամկետի համար:

Ընկերության Կենսաբազմազանության քաղաքականության համաձայն Ծրագրի նպատակն է չունենալ կենսաբազմազանության ոչ մի կորուստ և երաշխավորել, որ Ծրագրի աշխատանքների արդյունքում չի լինի կենսաբազմազանության և էկոհամակարգերի գործառույթների համակարգված դեգրադացում կամ կորուստ:

Հասկանալի է, որ ընկերությունը համարել է կրիտիկական կենսամիջավայր միայն Մատնունի ծիրանավոր և գորշ արջի ապրելավայրերը, ուղղորդվելով համաձայն ՎՋԵԲ-ի թիվ 6 ԿՊ-ի ԵՄ Կենսամիջավայրերի դիրեկտիվի / որտեղ գորշ արջը գրանցված է Հավելված IV-ում, ինչը նշանակում է, որ նրա կենսամիջավայրի դեգրադացումն արգելվում է/, սակայն հասկանիլի չէ, թե ինչու ընկերությունը չի ուղղորդվել նաև ՀՀ օրենսդրությամբ՝ Ընդերքի մասին օրենսգրքի, «Կենդանական աշխարհի մասին» և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքների:

Ամուլսարի ոսկու հանքի ՇՄԱԳ-ի աղյուսակ 5.7.10. ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների վրա հավանական ազդեցությունների փոխհատուցման մեջ նշված է, որ հայկական իժի, Հայկական լեռնատափաստանային իժի, կատվածի համար լրացուցիչ կենսամիջավայր հավանաբար կարող է ստեղծվել Հերիերի նոսրանտառային պետական արգելավայրում՝ **հրդեհումների, հունձի և ծառերի** նոսրացման միջոցով: Այս դրույթը նույնպես ընդունելի չէ, քանզի խոսքը գնում է բնական միջավայրի արհեստական խախտմանը, առավել ևս առաջարկվում է դա անել բնության հատուկ պահպանվող տարածքում:

Էկոլոգիական ծառայությունը բավականին լավ արտահայտված է փաստաթղթում: Լավ կլիներ ներկայացվել Էկոհամակարգային ծառայությունների ֆինանսական կողմը: Օրինակ աղյուսակ 5.11.3. ըստ կադաստրի դասակարգման գյուղատնտեսական հողերի կորուստը /վարելահող 17,5%, խոտհարք 21,8%, այգի 35,6%, արոտավայր 11%/ արտահայտվել նաև գումարային տեսքով: Նույնը վերաբերվում է նաև այլ էկոլոգիական ծառայությունների կատեգորիաներին:

Վեջապես փաստաթղթում նշվում է, որ Գլուխ 4-ում Ծրագրին առնչվող կենսաբազմազանության վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 2008 թ.-ից: Ուսումնասիրություններում օգտագործվել են նաև տեղացի փորձագետների և միջազգային մասնագետների ներկայացրած տվյալները: Ներգրավվել են պետական և հասարակական կազմակերպություններ, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտը և Կենդանաբանության ու հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, Հայաստանի թռչունների պահպանման միությունը, Կովկասի բնության հիմնադրամը և **Վայրի բնության համաշխարհային հիմնադրամը (WWF)**: Այս ամենը չի համապատասխանում իրականությանը, քանի որ **բնության համաշխարհային հիմնադրամը (WWF)** երբեք չի ընգրկվել ընկերության գործունեության մեջ:

Իրավական հարցեր

Ամուլսարի ոսկու հանքի տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ: Բաց հանքի և դրա կից կառույցների շահագործումը հանգեցնելու է այդ տեսակների ապրելավայրերի կորուստին կամ առնվազն վատթարացմանը և անխուսափելիորեն կրճատվելու է դրանց թվաքանակը:

Այդ հանգամանքը հակասում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի, «Կենդանական աշխարհի մասին» և «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքների, ինչպես նաև «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» /Բեռնի/ և «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիաների հետևյալ հոդվածների դրույթներին.

ա) ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի հոդված 26-ը սահմանում է ընդերքօգտագործման արգելման հիմքերը՝

«Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի եւ առողջության, պատմամշակութային արժեքների կամ բնության եւ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող ընդերքի տեղամասի վրա գտնվող հողամասում կան՝

1) գերեզմաններ.

2) բնության, պատմության եւ մշակույթի հուշարձաններ.

3) Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև եթե սովյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:»

բ) «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է՝

«Բնական պաշարներն օգտագործողները, որոնք տնտեսական կամ այլ աշխատանքների ընթացքում վնաս են հասցնում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար:

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը եւ դրանց ապրելավայրերի վատթարացմանը:»

գ) «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի բոլոր օբյեկտները ենթակա են իրավական պահպանության:

Կենդանական աշխարհի օբյեկտների և դրանց ապրելավայրերի անվտանգության, ինչպես նաև կենդանիների կենսագործունեության առանձնահատկությունների անխաթարությունն ապահովելու նպատակով նախատեսվող տնտեսական, շինարարական, սոցիալական և այլ գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»

դ) ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է՝

«Հողօգտագործողները, որոնց տարածքներում աճում են Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց աճելավայրերի վատթարացմանը:»

ե) «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. «Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանության են ենթակա բուսական աշխարհի բոլոր օբյեկտները:»

զ) «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» /Բեռնի/ 3-րդ հոդվածի համաձայն.

1. «Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի քայլեր վայրի ֆլորայի, վայրի ֆաունայի և բնական միջավայրերի պահպանությանն ուղղված ազգային քաղաքականությունը խթանելու համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով վտանգված և խոցելի, հատկապես տեղական տեսակներին և վտանգված բնական միջավայրերին՝ համաձայն սույն Կոնվենցիայի դրույթներին:»

2. «Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր քաղաքականությունը ծրագրելիս ու մշակելիս, ինչպես նաև ադոպտման դեմ ուղղված իր միջոցառումներում պարտավորվում է հաշվի առնել վայրի ֆլորայի և ֆաունայի պահպանության հարցերը:»

ժ) «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն.

1. «Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

Եզրակացություն

1. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կենսաբազմազանությանը ուսումնասիրությունները կատարված են բավականին լավ, սակայն կան որոշ բացթողումներ, հանձինս չեն ուսումնասիրվել տարածքում հանդիպող սնկերը, լրացուցիչ ուսումնասիրություններ են պահանջվում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված որոշ տեսակների վերաբերյալ /Ոգնատուփ մեխակի (VU), սխտորագորտ (VU), Անդրկովկասյան սահնօձ (VU), Բեզարյան այծ (VU) և անողնաշար կենդանիներից ապուլոն թիթեռ (VU)/:
2. Գնահատվել են առանձին տեսակները, նրանց իրավիճակը, տարածվածությունը, ապրելավայրերը, սակայն չի գնահատվել հանքավայրի ազդեցությունը ընդհանուր կենսացենոզի վրա, ինչպես նաև ցիանիդի և ծանր մետաղներով հագեցած փոշու ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա:
3. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կենսաբազմազանության պահպանման ծրագիրը հիմնականում վերաբերվում է բույսի մեկ տեսակի՝ Մատնունի ծիրանավոր և կենդանու մեկ տեսակի՝ Գորշ արջ: Մնացած ՀՀ կարմիր գրքերում գրանցված տեսակների համար պահպանության միջոցառումները հիմնականում սահմանափակվում են Ջերմուկ ազգային պարկի ստեղծումով:
4. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի կենսաբազմազանության փոխհատուցման ռազմավարությունը հիմնականում սահմանափակվում է Ջերմուկ ազգային պարկի ստեղծումով:

5. ՇՄԱԳ-ի դրական եզրակացությունը հակասում է ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածին, «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի 17 և 18-րդ հոդվածներին, Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքի 16 և 17-րդ հոդվածներին, քանզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի տարածքում հայտնաբերվել են բազմաթիվ տեսակներ՝ գրանցված ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում:


Կարեն Մանվելյան, կ.գ.թ.
Բնության համաշխարհային հիմնադրամի
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն



30.08.2018

Հավելված 1.

Հայաստանի կենսաբազմազանության կարևոր տարածքները և էկոլոգիական միջանցքները



Հավելված 2

Հայաստանում Հայկական մուֆլոնի ապրելավայրերի հավանականությունը

